# ԶՈՒՅԳԱՂԲՅՈՒՐ

Վարչական ղեկավար՝ Ավետիք Ամիրյան

Հեռ: 094 84 42 77

Մակերես՝ 33.99 կմ$^2$

Բնակչություն՝ 510

Ինդեքս՝ 2803

zuygaghbyur.shirak@mta.gov.am

Զույգաղբյուր գյուղը հիմնադրվել է 1820 թվականին՝ Արևմտյան Հայաստանի Բասեն գավառից գաղթած, սկզբնական շրջանում Սպիտակի տարածաշրջանում հաստատված, այնուհետև դեպի Աշոցք գավառ տեղափոխված բնակչության կողմից: Բնակավայրը սկզբում կոչվել է Չիֆթալի, իսկ 20-րդ դարի կեսերին վերանվանվել

Զույգաղբյուր: Գյուղի ազգաբնակչությունը բացառապես հայեր են: Գյուղն իր մասնակցությունն է ունեցել ինչպես 20-րդ դարի սկզբին, այնպես էլ հետագա տարիներին երկրում կատարված փոփոխություններին, անցել է խորհրդայնացման և կոլեկտիվացման բարդ ժամանակաշրջանը, մասնակցություն է ունեցել Հայրենական մեծ պատերազմին, հետպատերազմյան վերականգման աշխատանքներին, Արցախյան ազատամարտին: Արցախյան գոյամարտին գյուղը ունեցել է իր մասնակցությունը և տվել մեկ զոհ:

1986 թվականին գյուղը տեղափոխվել է նոր բնակատեղի, գյուղում առկա ջրային պաշարների համար ջրամբար կառուցելու և ջուրը Գյումրի տեղափոխելու պատճառով:

Պատմա-մշակութային հուշարձաններն են՝

<<Հին Զույգաղբյուր>> գյուղատեղիում, հարավ-արևելյան հատվածում է գտնվում քանդված եկեղեցի (18-19-րդ դարեր), իսկ գյուղից 1.5 կմ հարավ-արևմուտք գտնվում են Մեգալիթյան պարիսպ և դամբարանադաշտ (Ք.ա. 2-ից 1-ին հազարամյակներ):